

մայե Գէորգ Եպ.ին, որ առանց խիղճ ընելու պաշտօնը վարէ:

Անդին Գէորգ Եպ.՝ Պատրիարքին թուղթը չհասած, Էջմիածին կը գրէ, որ արձակուելու կերպն իմացընեն: Էջմիածնի Եպիսկոպոսները կաթողիկոսին կտակին համեմատ կը պատասխանեն, թէ Էջմիածին չեկած՝ կարելի չէ արձակում գտնել: Գէորգ անճար մնացած՝ քաղաքացիներէն 500 ղը. կ'առնու եւ կ'ուղեւորի Էջմիածին: Կարին հասնելուն՝ տեղւոյն փաշային սեղանաւոր Ղազար Աղային կը գիմէ, նա ալ նորընտիր Սիմէոն կաթողիկոսին նամակ կը գրէ՝ որ Գէորգին արձակման թուղթը շնորհէ: Սիմէոն կը մերժէ: Գէորգ Ղազար Աղայէն յանձնարարական առած՝ կը փութայ Իւչքիլիսէ, ուր էր կաթողիկոսը, եւ հազիւ թէ կը հասնի Պայազիտ՝ կաթողիկոսն ասկէ մեկնելու վրայ էր. եւ թէպէտ Գէորգ շատ կը ջանայ միջնորդներով՝ որ նոյնտեղ արձակումն առնու, սակայն Սիմէոն կը մերժէ զանիկայ երեսէն. Գէորգ չ'ուզեր դէպ Էջմիածին ընկերանալ անոնց. անոնք բռնութեամբ կը տանին զինքը միասին:

Այստեղ 1763 Սեպտ. 23ին, կաթողիկոսն Եպիսկոպոսաց առջեւ զԳէորգ կը յանդիմանէ, եւ արձակման թուղթ կու տայ միայն այն ատեն, երբ Գէորգ «մեղայ» կ'ըսէ, եւ գրով կը խոստանայ որ այնուհետեւ կաթողիկէութեան նշան մ'անդամ պիտի չցուցընէ՝ («ոչ եւս ցուցանել զնշան ախթարմայութեան», Զամբո, 247) Էջմիածնի հնաղանդութեան տակ պիտի